



յան քաղաքակրթութեան զանազան կեդրոններուն մէջ. Վենետիկ, Բարիզ, Մոսկուա, Կ. Պոլիս, միշտ Արտասահման, հայրենիքէն հեռու. քաղաքական պայմաններն ու հաղորդակցութեան միջնադարեան ճամբաները կարելի չ'էին ըներ ստեղծումը տպարաններու եւ լրագիրներու բուն Հայաստանին մէջ:

Իր գոյութեան առաջին շրջանին մէջ, հայ մամուլը — ինչպէս նաև բոլոր ազգային մատենագրութիւնը միջին դարուն մէջ Ե. դարէն ի վեր — կղերէն կը վարուէր տարամերժօրէն: Աստի՛ կրօնային նկարագիրը զոր հայ պարբերականներն ունէին իրենց սկզբնաւորութեան մէջ:

Ժ.Ք. դարուն երկրորդ կիսո՛ւն լոկ՛ հայ մամուլը մտաւ աւելի կամ նուազ կանոնաւոր զարգացման մը փուլին մէջ:

1848ի մեծ դէպքերն իրենց հակադարձն ունեցան նաև Օսմ. կայսրութեան մէջ. արևմտեան ազատականութեան հովը շնչեց բոլոր Արևելքին վրայ. Պալգաններուն ու Փոքր Ասիային քնացած ցեղերն ուժգին կերպով զգացին իրենց կացութեան սոսկումն ու լաւագոյն կեանքի մը պէտքը: 1856ին Բարիզի դաշնագրով Եւրոպային միջամտութիւնը մեծ թուիչ տուաւ բարգաւաճման այս շարժման:

Հայերը — Դ. դարէն ի վեր քերհնտոնեայ ժողովուրդ, որուն պատմութիւնը մշտապէս մաքառում յ'է բարբարոս արչաւանքներուն դէմ — իրե՛նք ալ մղուած տարուեցան քաղաքական ու մտաւորական վերածնութեան ճամբուն մէջ:

Վարժարաններու և ուրիշ ընկերային հաստատութեանց հետ, ազգային ու ազատական ձգտումներով մամուլ մը ստեղծուեցաւ Թրքահայաստանին մէջ: Փոքր Ասիոյ մէջ առաջին պար-

բերականը Հայերէն հիմնուեցաւ 1857 ին:

Այս մամուլը կը վայելէր ի սկզբան աստիճան մ'ազատութիւն: Արձագանգը կ'ըլլար ազգին տառապանքներուն, որոշ չափով մեզ կը թարգմանէր անոր բաղձանքները:

Ի՞նչ քիչ կասկածելի դարձաւ կառավարութեան աչքին: Դրակօնեան միջոցներու ենթարկուեցաւ, երբոր քաղաքական ու անկեղծօրէն ժողովրդական շարժում մը գծուեցաւ Հայաստանի հորիզոնին վրայ:

Հիմայ չը կայ Թրքահայաստանին մէջ ո՛չ մէկ պարբերական հրատարակութիւն, հայ գրագէտները, մտաւորականները վտարուեցան արտասահման, ուր կը կեդրոնանան այսօր հայ լրագիրներուն մեծ մասը (1):

Կ. Պոլսոյ քանի մը թերթերը կեղծ գոյութիւն մը լոկ ունին. թունաւորուած մթնոլորտի մը մէջ, ուր կամայականութիւնը կը թագաւորէ վեհապետօրէն, մամուլը չը կրնար բնականաբար շունչ առնել:

Բնորոշելու համար անոր արդի վիճակը, կը բաւէ յիշեցնել թէ՛ դրաքննութիւնը, ամեն բռնակալութեան այս անհրաժեշտ գործակալը, չը թոյլ իսկ տա՛ր գործածել բառերը. «Հայաստան», «Հայրենիք», «Հայ Պատմութիւն», ևն: Հայաստանի նախնի թագաւորներուն անուններն ալ ջնջուած են հայ պարբերականներէն ու եկեղեցական մատենաներէն անգամ: Դեռ նորբոս արգելուեցաւ գործածութիւնը «Ազգային» բառին:

Խոտիւ արգելուած է հայ թերթերուն լսեցնել տարտամ բողբոքներ

(1) Ահա՛ հայ պարբերականներուն ցուցակը. Թրքահայք, Օ. Պարսկահայք, Օ. Ռուսահայք, 5. Կ. Պոլիս, 5. ԵՒՐՈՊԱ. (Ֆրանսա, 6. Անգլիա, 3. Զուիցերիա, 1. Աւստրիա, 1. Իտալիա, 1. Պուլկարիա, 2.) Եգիպտոս, 3. Ամերիկա, 3:

իսկ, ո՛չ միայն երկիրը ճնշող սարսա-  
փի դրուժեան դէմ, այլ սոսկական  
քուրտ աւազակներու նախճիրներուն  
դէմ անգամ:

Մեծ ջարդերուն ժամանակ, երբ  
որ ամբողջ աշխարհը կը սարսուռ  
սրտամտութեամբ, հայ մամուլը ստիպ-  
ուած էր լռութիւն պահելու: «Հայ  
գրգռիչները կարգը խանգարած ըլլա-  
նով, քահայտանիս քանակը միջատեց  
կարգը վերահաստատելու համար», ա-  
հա՛ թէ ինչպէս արձանագրուեցաւ,  
հայ թերթերուն մէջ, մարդկային  
պատմութեան ամենամեծ աղէտքը,  
վեհապետին հրամանով 300000 ան-  
մեղներուն խոզիսողումը:

Այն պահուն իսկ, ուր արիւնը կը  
հոսէր հեղեղորէն ամբողջ Հայաստանի  
մէջ, այս դժբաղդ երկրին լրագիրնե-  
րը կըստանային, հրատարակելու հա-  
մար, պաշտօնական զեկոյցներ, ըսելով.  
«Ենորհիւ նորին վեհախառնութեան,  
կարգն ու անդորրութիւնը կը քաղա-  
ւորեն կայսրութեան մէջ»:

Մեծ արանակ ջարդերուն հետեւե-  
ցաւ դանդաղ բնաջնջումին շրջանը:  
Հայաստանն այս ժամուածատերավայրն  
է անանուն խժդժութեանց, Քուրտե-  
րու և Պաշլապօզուքներու վայրենի  
հրոսներ ազատ սուպարէզ կուտան ի-  
րենց վայրագ բնազդներուն, կը թալ-  
լեն, կը բռնաբարեն ու կ'սպաննեն երկ-  
րին մէկ ծայրէն միւսը: Ըն այս ամեն-  
քէն բառ մ'իսկ չ'էք կարգար հայ մա-  
մուլին մէջ. կացութիւնն իրօք աղե-  
խարշ է:

Տեա՛րք,

Անհուն ողբերգութիւնը՝ որ Հայ-  
աստանի մէջ կը կատարուի 10 տարիէ  
ի վեր՝ պէտք չէ ձեզի անծանօթ ըլ-  
լայ և չը կրնար ձեզ անզգայ թողուլ:  
Խնդիր է կեանքին ու մահուան 3 մի-  
լիոն հոգիներով վաղեմի ժողովուրդի  
մը, որ արեւմտեան քաղաք սկրթութեան

տանողն է Ասիոյ աղլամուղներուն  
մէջ:

Ամենասոսկալի խուճապին ատեն  
այս ժողովուրդը զո՛ւր կոչում ըրաւ  
քաղաքակրթուած մարդկութեան:

Դաւաճան լռութիւն մը սարքուե-  
ցաւ Հայկական Ջարդերուն շուրջը:

Մամուլը լռեց: Ան որ պէտք էր  
կարծիքը վերահասու ընել թուրք կա-  
ռավարութեան կողմէն ընդդէմ-մարդ-  
կութեան գործուած ոճիրներուն, լոկ  
կշտամբանքի խօսքեր ունեցաւ բնակ-  
չութեան մը համար, որ ի՞նչ դերագոյն  
յուսահատութեան մէջ, կը դիմէր եր-  
բեմն ապստամբութեան, պաշտպանե-  
լու համար իր տարրական իրաւունք-  
ները, միջազգային դաշնագիրներով  
նուիրադարձուած:

Նոյն իսկ — ասիկայ պիտի մնայ  
անջնջելի ամօթ մը քաղաքակրթու-  
թեան համար — Ապտ — Իւլ — Համիդ  
մարդասպանը կըցաւ առանց դժուա-  
րութեան զնել եւրոպական մեծ  
թիւով լրագիրներու լռութիւնը:

Ցաւալի է մեզի, Տեա՛րք, վերար-  
թընցընել այս տխրեցուցիչ յիշատակ-  
ները, հաստատել այս մթազնումը,  
մարդկային խղճմտանքին այս խաւա-  
րումը:

Դուք, տիեզերական մամուլին  
ներկայացուցիչներ, դուք չէ՞ք տեսներ  
որ ա՛լ եկած հասած է ժամանակը  
հրատարակութեամբ կաղմակերպելու  
վիթխարի շարժում մը բողբոջի, մարդ-  
կութեան առջև պաշտելու Սուլթա-  
նին ոճիրները, անդադար տէրութեանց  
յիշեցնելու իրենց յանձնառութիւննե-  
րը Հայաստանին հանդէպ և կանչել  
անոնց ազդու միջամտութիւնը, որ  
միայն պիտի կրնար վերջ մը դնել  
մարտիրոս ժողովուրդին շարչարանք-  
ներուն:

Ամեն երկիրներուն անկախ մա-  
մուլը, առանց կարծիքներու տարբե-  
րութեան, պիտի շարունակէ, կը յու-

սանք, պաշտպանել արդար դատը  
Հայաստանին, որ ամենէ առաջ մարդ-  
կայնութեան դատ մ'է. ու նպատա-  
ւորելով բարգաւաճումը հայ ժողո-  
վուրդին, պիտի սատարէ մեր հայրե-  
նիքին մէջ ստեղծելու ազատ ու հզօր  
մամուլը, որուն պաշտօնը պիտի ըլլայ  
ծաւալել արեւմտեան գաղափարները  
բոլոր առաջաւոր Ասիոյ մէջ:

Այս մտքով է, Տեա՛րք, որ ձեզի  
կը դիմենք, խնդրելով սը ձեռք առնէք  
որոշողութիւն մը պարտաւորելու բու-  
վանդակ աշխարհին մամուլը մէ'կ ծրա-  
գրով պաշտպանելու համար հայկական  
դատը — մարդկութեան ու քաղաքա-  
կրթութեան դատ մը:

Վասն Երոստայի Հայ Ռուսնոցաց  
Միութեան:

Յուլիս 1902

Ժընէվ.

ԳՕՄԻԹԷՆ

### ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

ԵՒ

### ՀԱՅԱՍՏԻՐԱՅ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Եւրոպական թղթաբերով հասան  
մանրամասնութիւնները Պրիւքսէլ գու-  
մարուած Հայասիրաց համաժողովին,  
որուն նշանակութիւնն ըմբռնելու հա-  
մար, կ'ուզէինք նախ մեր բնիկ քաղա-  
ներուն տալ անսոր գէթ ամփոփ նկար-  
ագրութիւնը, քաղելով էմսեքանսանս  
պէջժ և էդուաշ պէջժ օրաթերթերէն,  
որոնք Յուլիս 19ի թիւով, երկերկու  
սիւնակ նուիրած են միայն հինգշաբթի  
օրուան նիստին:

«Հինգեաբբի, Շէրպիֆի պաւսօ-  
նասան դիմաց, Թուրէլի արհարանին  
սրահի մը մէջ բացուեցաւ հալածուած  
Հայերուն ի նպաստ Համաժողովը:

Շաս համաժողովականներ բռնած

են շէրպիֆական սրահակը, պարա-  
գային համար զարդի տունկերով ու  
գորգերով շէրպիֆադարուած:

Օսար համաժողովականաց մէջ կը  
սեանենք. Տ. Տ. Ժօրէս, տը Բրէսանսէ,  
Վազէյլ, Տիկնայք Սէվրին. Հէննիկս  
(Տանըմարքա), Պառօնուհի Ուստովիչ  
(Հոլանտա), Տ. Տ. Ժան Լուիկ, դանի-  
ական Լախիկն եղեւնական Լախա-  
րար, Հաս, դանիական Լախիկն երես-  
փոխան, Պէրնար Լազար. Պէյճիֆա-  
ցիներէն, Տ. Տ. Ժիւլ Ը Ժէօն, Էլի և  
Էլիդէ Բէգլիւս, Վանտերվելտ, Լաֆօն-  
դէն, Ռուայեէ, Ֆիւրնըմօն, Էգգօր  
Տընի, Պէրթրան, Մօնսէօր, Բէննիս,  
Շարլ Տըմօնկ, Նիս, ևն:

Մեծ թիւով սիկիւններ կան ու և-  
կեղեցականներ:

Տ. Հուգօ սը Լընէ կը նախագահէ:

«Կը բանայ նիստը ժամը 3 1/2 ին,  
յայտարարելով սը ինք կ'անդիտանայ  
թէ ի'նչի կը պարտի նախագահութեան  
պատիւը. Թերևս ժողովուրդներուն  
խաղաղացման առաքելներէն մէկն  
ի'նք ըլլալուն համար. ի'նչ որ ալ  
ըլլայ, ինք շնորհակալ է ունկնդիրնե-  
րուն որ եկած են հայ գօթիթէին հը-  
րաւերին. այս փոթիտութիւնը միսի-  
թարիչ է, զի համաժողովականները  
հնազանդած են արդարութեան զգաց-  
ման մը լսի, յուսալով շուտով տեսնել  
արդարասիրութեան աւելի՛ թագաւո-  
րելը ժողովուրդներուն մէջ. Պէտք է  
նաև շնորհակալ ըլլալ համաժողովին  
2000 հաւանողներուն, որոնք չ'են կըր-  
նոյր ներկայ գտնուիլ, բայց որոնք  
անսոր կը միանան մտածումով, վեհ մտա-  
ծումով մը:

«Տ. Հուգօ կը հաստատէ թէ այս  
Համաժողովին մէջ միջազգային ար-  
դարութեան վրայ է խնդիրը, և շնոր-  
հակալութիւնը կը յայտնէ բազմաթիւ  
օտար անձերուն որոնք շատ հեռուէն  
եկած են, հաղորդակից ըլլալու վեհ  
զգացման մը:

Ատենաբանը կը մաղթէ որ Համաժողովին խորհրդակցութիւններէն դուրս գայ այս իրողութիւնը. որ ժողովուրդները լուսաւորուին ու ձեռք առնեն իրենց վերաբերող իշխանութիւնը, գիտնալով իրենց կարգին իշխել պարտամուտաց կառավարութեանց: Համաժողովին խորհրդակցութիւնները պիտի ունենան բարոյական մեծ արժէք:

Ատենաբանը կարգաց Քղանազան հեռագիրներ ու նամակներ օտար անձերու որոնք կը բազման որ հայկական հարցը շուտով կարգադրուի:

Համաժողովը փոխ-նախագահներ կարգեց Տիկին Հէննիկս (Տանըմարքա) Տիկին Ուարձլըվիչ (Հոլանտա) եւ Տ. տը Բրէսանտէ (Փրանսա):

Յետոյ խօսքը տրուեցաւ Տ. Բիէռ Բիյեարի, որ իրեն մասնագիտութիւն ըրած է Հայկ. Հարցը:

«Տ. Բիյեար, կը պարզէ Հայաստանի մէջ քրիստոնէից հիմակուան վիճակը. կը յիշեցնէ 1894-1896ի մեծ կոտորածները, ուր ջարդեցին, այրեցին, անդամատեցին 300,000 մարդկային արարածներ. Եւրոպական դիւանագիտութիւնը մնաց անզգայ՝ այս տեսարանին հանդէպ, որ աշխարհի մէջ իր նախընթացը չ'ունի:»

Մեծանուն հայասէրը, աղնիւ զայրոյթով մը լեցուած, կը շարունակէ. «Մեծ ջարդերը դադրած են հիմայ, բայց ասոնց կրկնութենէն վախնալու տեղի կայ. Թուրք կառավարութիւնը վճռած է բնալինջ ընել ամբողջ Փոքր Ասիոյ հայ ցեղը. Այս բանին համար կը գործածէ հետեւեալ 6 միջոցները.

1. Երթեկութեան արգելք.
2. Հարկերու հաւաքում.
3. Ոստիկանութիւն ու բանտեր.
4. Հայկական հողերուն վրայ՝ դաղթականաց տնջաւորում.
5. Գաղանային խժգժութիւններ, սպանութիւններ ու աւազակութիւններ,

ներ, քիւրտ պէյերուն ու օսմ. իշխանութեանց մեղսակցութիւն.

6. Իսկական ջարդեր. — Զեթուն ու Սասուն:

Ու այս դժուրներէն ամեն մէկուն վրայ, Տ. Բիյեար կը դիզէ ապացոյցներ, կը հայթայթէ վիճակացոյցեր, առաջ կը բերէ դէպքեր, ու այս բոլորը, ահռելի յայտնութիւններու շարք մը, կը ձգէ ժողովին վրայ սոսկումի խորունկ տպաւորութիւն մը:

Գարավերջիկ ջարդերուն յուզիչ նկարագրութենէն կ'անցնի ներկային, կը հաստատէ թէ Մուշ կը սարքեն նոր նոր ջարդեր. Տարիէ մ'ի վեր Զեթուն ու Սասուն կը գործուին հաւաքական սպանութիւններ. Գոմիթէն երէկ իսկ Բաքուէն ստացաւ հեռագիր մը ծանուցանող թէ՛ Մշոյ դաշտը պաշարուած է ու ռազմագիտական դիրքը դրաւուած կանոնաւոր զնգերէն ու քիւրտերէն. ուրեմն պէտք է սպանել նոր ջարդեր. Սակայն, Քրանսական նոր գործակալ մը զրկուեցաւ հոն վերջերս:

Ատենախօսը ջախջախիչ փաստերով կը հերքէ Հայ ցեղը վարկաբեկ ընելու դիտումով յերկրուած կարգ մը զրպարտութիւններ:

«Միա՛լ է, կը դռչէ Բիյեար, կարծել թէ հայ ժողովուրդը «վաշխաւու» ըլլայ. 90 010ը հողագործներ են. ուրեմն պէտք չէ՛ հաւատալ այս դրժբազդներու թշնամիներուն յերկրանքներուն, այս ցեղը կ'արտագրէ ճարտարաբանութիւն ընտիր գործաւորներ. Ամեն կասկած փարատե՛լ պէտք է այս մասին: Հայերուն օգնող Եւրոպացիները՝ խիստ յանձնարարելի և խիստ շահեկան էակներու պիտի օգնած ըլլան:

Թշնամիներուն մէկ ուրիշ առարկութիւնն ալ կրթնած է վիճակացոյցներուն. կ'ըսեն թէ հայ բնակչութիւնը հազիւ 3 միլիոնէ կը բաղկանայ 12 մի-

լինն թուրքերու վրայ, Բայց այս բնակչութիւնը համախմբուած է քանի մը նահանգներու մէջ և զայն խեղճաժ են թուրք բնակչութեան մէջ, ճիշդ ինչպէս երբ Շամբանեան կցէին Ալմանիոյ ու յետոյ դային մեզի ըսել թէ Շամբանեայի մէջ Ֆրանսացի չըկայ...

«Գանք հիմայ դրական առաջարկներու: Պէ՛տք է թողուլ որ կատարուի Հայոց բնաջնջումը, և զիրենք մատնել աղէտքի մը որ ապահովապէս պիտի սպաննէ զիրենք: Պէ՛տք է կցել թըրքա-Հայաստանը Ռուսիոյ: Ո՛չ, Ռուսահայերը բարեբաղդ չ'են ու ենթարկուած են անթիւ կեղեքումներու: ուրեմն Հայաստանը շահ մը չ'ունի ուսանալէ: Պէ՛տք է ձեռք բերել վարչական բարենորոգումներ: Հո՛ս է, կարծենք, ճշմարիտ լուծումը, ամենաճարպիկ լուծումը: Պէ՛տք է ծննդով Եւրոպացի ու չեզոք Բարձր-Քննիչ մ'անուանել, որուն արարքներուն վրայ հսկեն մեծ տէրութիւնները, անուանել նաև, Կ. Պոլսոյ մէջ, եւրոպական Յանձնախումբ մը: Բայց, լա՛ւ պիտի ըլլար Հայաստանի մէջ չը թողուլ ո՛չ մի թուրք պահակազօրք: Այսպէս, թեքնս, խիստ շուտով դործելով, կարելի ըլլար ազատել Հայերու մնացորդը:

Բայց որո՞ւ առաջարկել այս բարենորոգումները գործագրել տալու համար:

Եթէ դործել ուղուէր, Դուռը տեղէն ա՛լ չ'էր շարժեր: Զը հաստատեցի՞նք որ երբ Եւրոպան կը յուզուէր, անմիջապէս կը կէցընէին շարժերը: Ամեն անգամ որ Եւրոպան միջամտած է, շարժերը դադրած են:

Սակայն, կ'ըսեն, նորէ՞ն պիտի բանաք Արևելեան Հարցը: Ո՛չ, Կրետէի ու Լորանտոյի օրինակները դեռ թարմ են:

«Փրանսան, Իտալիան ու Անգլիան, հակառակ միւս երկիրներուն ընդդի-

մութեանը, ազատեցին Կրետէն թուրքիայէն: Յետոյ, Լորանտոյի ու թուրքիայի պահանջներուն համար, վերջերս Ֆրանսան ցոյցեր ըլաւ Սուլթանին: Ասի չը՝ հաստատեր թէ՛ մարդկային պատճառի մը համար՝ եւրոպական միջամտութիւնը կարելի է: Եթէ տէրութիւնները չը միջամտեն, արդար է զանոնք Սուլթանին մեղսակիցները կոչել (Ծափեր) »:

ժողովը ձեռնարկեց այնուհետև կարգելու Յանձնախումբ մը, որուն պաշտօնն ըլլայ փնտռել գործնական միջոցները:

Ա. Հաստատելու համար մշտական հանձնախումբ մը՝ Եւրոպայի բոլոր երկիրներուն Հայաստաններուն միջև:

Բ. Ազդուորէն գործելու համար Եւրոպայի հանրային կարծիքին, խորհրդարաններուն ու կառավարութեան ց վրայ:

Տիկին Սէվրին, քանի մը թրթուուն խօսքերով Յանձնախումբին ուշադրութիւնը հրաւիրեց ամեն երկրի մամուլին աջակցութիւնն ապահովելու պէտքին վրայ:

«Պէ՛տք չէ՛ որ պապանձինք, ինչպէս երբեմն եղանք, քանի մը լրագիրներու մէջ, ուր մեզի արդիւնեցաւ խօսիլ Հայի. Հարցին վրայ, պատճառներով, որոնք չ'եմ ուզեր հետախուզել: Յուսալի է թէ քանի մը լրագիրներ վարող վաճառականներ տեղի պիտի տան այսպիսի միջազգային համաժողովի մը բաղձանքին առջև: Պէ՛տք է մամուլը մեզի օգնէ՛ ժողովուրդին ճանչցնելու Հայի. Հարցը, որ չէ՛ քաղաքական, այլ մարդկային հարցը: Պէ՛տք է որ ա՛ն մեզի օգնէ՛ քրիստոնեայ կիներուն ճանչցնելու համար թէ ինչո՞ւ իրենց հայ քոյրերը, թուրք զօրքերէն հալածուած, իրենց կուրծքին վրայ կը դնեն իրենց զաւակներն ու անոնց հետ անդո՞ւնգը կը նետուին: (Ծափեր) »:

Յանձնախումբին անդամները կարգելու մասին Տ. Ժորէսի ըրած միջամտութենէն վերջ՝ նիստը փակուեցաւ ժամը 5 1/2 ին:

Ուրբաթ, Յանձնախումբին գումարումը, ընդհ. ժողովով վիճարանութիւն ժամը 2 ին և քուէարկութիւնը:

Եւրոպական գրեթէ բոլոր կարելոր թերթերը կը զբաղին այս օրերս Պրիւքսէլի Գօնկրէով, որ քաղաքական ո՛ր և է հանդամանք չունենալով իսկ, սահմանուած է համակրանքի հոսանք մը ստեղծելու եւրոպական ազգերուն մէջ դէպ ի մեր ցեղը, որուն մարտիրոսութիւնը դեռ չէ՛ վերջացած, և որ սակայն, հաւատանք, պիտի կրնայ ի վերջոյ ձեռք բերել իր ազատութիւնը, եթէ քայլ առ քայլ հետեւելով արեւմուտքի ազատական մամուլին, հայ մամուլն ալ իր կարգին ձեռք առնէ լրջօրէն հայկական դատը, պաշտպանէ Մեծ Գաղափարը, ցոյց տայ դէպի ցանկալի ազատագրութիւնը տանող միակ ճամբան — ՅեղԱֆՈՒՍՈՒԹԻՒՆԸ:

Այս՛, հաւատանք, մօտ է վերջը Հայրենիքի Տառապանքին, բաւական է որ, ամփոփուինք մենք մեր մէջ, աւելի՛ սեղմուինք, իրարու շունչով ապրինք, և նոյն զգացումը կրենք:

### Ք Ր Ո Ն Ի Կ

— ԷՕՐՕՐԷԷՆ 19 Յուլիսի թիւով 7 լայն սիւնակներ դրաւող յօդուած մը հրատարակած է Հայկ. հարցը վերնագրով, ուր կը կարգանք Տ. Քիյեարի կիսամետակի տեսակներուն վերջին մասէն կարևոր քաղուածներ: Մեծանուն Հայասէրը սոյն յօդուածին մէջ

ամփոփած է իր արտասանած ճառը, Պրիւքսէլի Համաժողովին առջև, որուն Ընդհ. Քարոուղարն եղաւ ինք:

— ԱՓՐԻԿԵԱՆ ՏՐԻՊՕԼԻՍ Իտալական 5 մարտնաւերու տորմիզ մը հասնելուն՝ ո՛ր և է քաղաքական մեկնութիւն պէտք չէ տալ, ամեն տարուան սովորական այցելութիւնն է կ'ըսուի:

— ՀՆՁ. ՅԵՂ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Ռուսճուգի մասնաճիւղին կողմէն կընքուած Շրջաբերական մը ստացանք, որուն ճակատը դրուած են Վ. Հիւկօ ի հետեւեալ անմահ տողերը.

Սմէն յեղափոխութիւն՝ կանոնաւորապէս կատարուած իրողութիւն մը ըլլալով՝ ըստ ինքեան օրինաւոր է. ստոյգ է թէ սուս յեղափոխականներ երբեմն կանպատուեն դայն, բայց յեղափոխութիւնը՝ նաեւ արատուած՝ հաստատ կը մնայ, նաեւ արիւնհարոյր՝ կենդանի կը մնայ:

Յեղափոխութիւններու ծնունդ սուղը հարկն է, եւ ոչ թէ դիպում մը . . . :

Վ. ՀԻԻԿՕ

Այս շրջաբերականով մեր պուլկարահայ հայրենակիցները կը հրաւիրեն ժողովուրդը փարելու յեղափոխութեան, որուն ծանր ու պահասախանասու գործը՝ Հնչակեան կուսակցութիւնն առնելով ուսերուն վրայ, նոր շրջան մը կը բանայ այսօր՝ հայրենիքի ազատագրութեան հարցը իրական հողի վրայ դնելու հաւար: Մաղթենք որ աւելի քան տասնեակ մը տարիներու դառն փորձառութենէն խրատուած՝ հայ յեղափոխութեան զեկալարներն ու մշակները գործի ձեռնարկեն լրջօրէն ու անկեղծօրէն: Ժողովուրդին բանակը շուտով պիտի հետեւի իրենց:

— ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ կողմէն «Իրօջակ»ը, Հնչ. Յեղ. Կուսակցութեան կողմէն Գօմիթէն, միացած, Պրիւքսէլի Հայասիրաց Համաժողովին ուղերձ մը զրկած են յանուն անորապող Հայրենիքին:

— ՀԱՄԱՃԱՐԱԿԸ ՅԵԳԻՊՏՈՍ. նախ Մուշա գիւղը, յետոյ Գահիրէ, բաւական աւերներ գործելէ յետոյ, երկու օր կայ որ հանդարտած է գոյնրան:

— ՄՍ.ԿԵԴՈՆԻՍԱն յուղուած է. 350 թիւով պուլիար հրոսախուժք մը նախկին դնդապետ Իֆօքի առաջնորդութեամբ Սթրուվիճախ քովերը կուռի բռնուեցաւ թուրք զօրաց հետ, որոնցմէ սպաննեց 25ը:

— ՄՕՆԹԷՆԷԿՐՅՈՆ ու ԹՈՒՐԻՔԱՆ. Սեւեռնցիներ սահմանադուրս անցած ու պաշարած են թուրք զօրքերը. Դուռը կը խնդրէ որ դուրս ելնեն. բայց ի զուր:

Ռուս մամուլը մեծ կարեւորութիւն կուտայ այս միջադէպքերուն:

**ՀԱՅԱՍՏՐԱՅ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ ՈՐՈՇՄՆԱԳԻՐԸ**

Գծնկրէն, համոզուած ըլլալով թէ՛ Հայոց պահանջած բարենորոգումներն ու երաշխաւորութիւնները կրնան իրագործուիլ առանց վնասելու թուրքիոյ

հողային ամբողջութեանը, կը հրաւիրէ կառավարութիւններն ու ժողովուրդները գործելու 1895ի յիշատակագրին ուղղութեամբ, համաձայն միջամտութեամբ մը, ու իր մշտական միջազգային Յանձնախմբին պաշտօն կուտայ բունն քօրականս կաղմակերպելու Խորհրդարանաց, Մամուլին ու Կարծիքին քով:»

— Ազգ. կենսական խնդիրներուն առաջնութիւն տալով՝ յաջորդին յետաձգեցինք տեղական ազգայինները, կըրթական, վարչական, ևն:

**ԳՈՂ ՄԺԳՕ**

Դաւառական կեանքէն

Գրեց ՆՇԻԿ ԵՐԷՑ

Ընդ մակնով է այս վէպը, որ մօտերս պիտի լոյս տեսնէ Արախս տպարանէն:

Բաժանորդագրուիլ փափաղողները 5 զրջ. ի նամակագրոյ՞մ կրնան զրկել Փիւնիկի հասցէին:

**SALAMANDER**

**ՍԱԼԱՄԱՆՏԸՐ**

Ապահովագրական Ընկերութիւն ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագլուխ 3,125,000 Ֆրանգ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս նաև Մովային, Իետային և Յամաքային փոխադրութեանց արկածներու դէմ:

Դիւրամատչելի դներ և պայմաններ

Դիմել առ Ընդհանուր Դործակալ ևս Լիւզօր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՅԱՆԱՆ

Աղեփսանդրիա, պզտիկ Մեկնչիե Ապուսաւրսա փողոց թիւ 10

**L'ALLIANCE**

**Լ'ԱԼԻԱՆՍ**

Մովային Ապահովագրական Ընկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամագլուխ 5,000,000 Ֆրանգ